

30 ԲԱՐՈՒ

ՄԷՃՄՈՒՆԻ ԱՆՊԱՐ

30 ԲԱՐՈՒ

DIRECTION DU JOURNAL

MEDJMOUA-7-AHBAR

65, Grand-rue de Péra, Taksim, 65

Ս.ՊՈՒՆԻՍ ԶԻՅԱԴ-Է-ՍԱԴԻՔ Սեպտեմբեր 6 այլուր

Խաղաղությունը 60 35

Մեծալիքի 85 45

Մեծալիքի 20 40

ՀԱՐՇԷՆՊԻՆ ԳԷ ՀՈՒՄՈՒՐ ԻՐԹԵՍԻ

ԿԻՆԵՄԱՏՈՐ ՆԷՏՐ ՕԼՈՒՆՈՒՐ

Խաղաղությունը այլուր բազմաթիվ :

مجموعة اخبار

بك اوغلى قسم جاده سی و نمره ٦٥

ՄԻՐՈՅ ԵՒ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԲԱՆՁԵԼԻՔՆԵՐԸ

Բ.

« Եւ արդ՝ ազաւեմ զա-
« մենեան զձեզ՝ դժուա-
« բարութիւնը ի վիճա-
« բանութիւնս և ի կոխու-
« և զերաշարժս ի հաշ-
« տութիւնս և ի խաղաղու-
« թիւնս »

Ս. Ներսիս Ենքոյան(*)

Եկեղեցւոյ ամենէն քաջամուտ և վսե-
մախոհ վարդապետներէն մին, մեծն Ս.
Գրիգոր Պապ կը գրէր առ Օգոստինոս,
հրաշագործ կրօնաւոր և առաքել Անդ-
րիոյ. « Մտածէ՛ թէ՛ հրաշագործութեան այդ
պարզեւր լեզուէն զի տրուած լի է համար,
այլ անոնց համար՝ որոց փրկութեան հոգը
լեզու չստացած է(**) »: Ստեփանոսայի
բարձրագոյն և համարժեցող նպատակով
միջոցն որ ընկերէն զմասն գեղեցիկ
աւ սիրալի առանձնաշնորհմամբ: Այս կա-
րեւոր ծանօթութիւնը պէտք չէ՛ երբեք
մոռնանք կրօնի պաշտօնական, եթէ չենք
ուզեր իմանալ և իմաստելու Աստուծոյ
կամքն այն է որ մեզ տրուած բոլոր շնորհ-
ներն և իշխանութիւնն զենքը ստուգելու ի
սպաս ժողովրդաց: Մեր սերն և անձնու-
րացութիւն պէտք է փայլին այնպիսի շքեղ
օրինակներով, որ ամենէն սկսպտիկն ան-
գամ չկարենայ տարակուսել մեր անկեղ-
ծութեան և պարտաճանաչութեան: Աշ-
խարհականք պէտք է համոզուին թէ մենք
էսպէս եղած ենք իրենց համար, թէ մենք
մեր փրկութիւնն իսկ կը վտանգենք, երբ
իրենց բարեքն անտեսենք կամ զլանանք,
և թէ վերջապէս պարզ ձեւակերպութեան
և անհոգի դարձարանք մը համար չէ՛ որ
Գերագոյն Քահանայապետն յերկրի, Աս-
տուծոյ առաջին Ներկայացուցիչն մարդ-
կութեան մէջ կատարագրէ « ծառայ ծա-
ռայիցն Աստուծոյ »: Եթէ Պոստիլի նման
հանձար մը կրցած է գրել ընդհանուր քրիս-
տոնէից մասին. « Զի ո՛չ առանձինն և եւթ
կամի զմեզ Աստուած պիտանիս տունել,
այլ զի և զայս եւս ի պիտանութիւն ա-
ծիցեմք(***): » որչափ առաւել սոյնպիսի
նուիրական պարտականութիւն մը կը ծա-
րանայ յաւէտ եկեղեցականութեան վրայ:
Մեր հոգեւորնք և երկից պանծալի Հայրա-
պետն Ենքոյանի կը յիշէ Յիսուսի իման
ազատագործ, և կը գոչէ իւր վսեմ չեղ-
անքով. « Զնոյն օրինակ պահանջելով և ի
նոցանէ (յաշակերտաց), թէ որպէս ես ո՛չ
հեղուկութեամբ, այլ շարժարանօք և մահ-
ուամբ ընկալայ զՔահանայութիւն ի վե-
րայ ազգի մարդկան, և դուք նմանապէս՝
մահու չափ նահատակեցարուք ի վերայ
սոյնարաց հոտի իմոյ, զոր ստացայ ար-
եամբ իմով: Որք և արարին ըստ հրամա-
նի, մեռանելով ի վերայ ժողովրդեանն,
որ հաւատացաւ նոցա ի Տեառնէ(****): »

(*) Թուղթ Ընդհանրական, էջ 53:

(**) Psychologie des Saints, par H. Joly p. 86.

(***) Սուք վանն Տիեզերական Պատմու-
թեան, էջ 288:

(****) Թուղթ Ընդհանրական, էջ 86:

Ի՞նչ մ'աւելի անդին թուելով ձերքերն ու-
րոնք անհրաժեշտ են ի՞նչ բարեք կիրառու-
թեան հոգեւոր պաշտաման, կը յորդորէ
զմեզ չզեղծանիլ մեր իշխանութեամբ.
« Հեղուկութեամբ յուշ առնէ (Ս. Պօղոս)՝ նը-
մանով լինել Մովսիսի և Դաւիթի, որք ի
հնումն էին հովիւք ժողովրդեանն իւրա-
յէթ, թէ նոյնպէս պարտ է և նորոց հով-
ուացս, հեղուկութեամբ և հանգարտութեամբ
հովուել զժողովուրդս, որպէս և հովիւք
զհօտս. և ոչ ճոխութեամբ և սաստկու-
թեամբ՝ ըստ աշխարհի իշխանաց(*) »: Ա-
րեւմտեան եկեղեցւոյ Ենքոյանի մեղա-
ծորանն Ս. Ամբրոսիոս նաեւ լսելի կ'ընէ
մեզ սոյն խօսքերն, որոց վրայ կ'արժէ
երկար մտածական մ'ընել մեր կուրծքը
բաղնելով. « Քահանայ մը, Աստուծոյ
պաշտօնեայ մը պարտի միասն և ո՛չ ու-
մեք և զոհանքն կամ գէթ ուզել զոհա-
ցնել ամեն մարդիկ. . . Քահանայն պէտք
է զգուշանայ վէճի և զժգոհութեան ա-
ռիթներէն: . . Մեծ սխալ մը և զժգալի
տուժիւն մ'է քահանային համար ո՛ր և է
մէկը թշնամի ընել իրեն(**) »:

Ահա թէ ի՞նչպէս ըմբռնած են Սուր-
բերն հոգեւոր իշխանութիւնն, որ էսպէս
սիրոյ, ներման, կարեկցութեան իշխա-
նութիւն մ'է, և որ իւր սոյն հանգամանօք
աւելի բարեք սփռած է մարդկութեան մի-
ջան ո՛ր և է ուրիշ զօրաւոր և զինեալ իշ-
խանութիւն: Եւ ժողովուրդը մը այնչափ
առաւել կը կարծող գէթոյ և կարեկցու-
թեան, որչափ որ քաղաքական զգուշի
բռնապետութեան մը ճիրաններէն այն ինչ
ազատած՝ կը ինքզինքն արդար իշխանու-
թեան մը նպատակներն ընդլայնել և մշտն-
ջենաւորել, և՛ եթէ հնար է՝ փակել ամեն
դուռ զեղծումներու և քմահաճ զինչպի-
տութեան առջեւ: Ս. Գրիգոր և Ս. Հարթ
կը հրամայեն մեզ միմիջարեւ, « Բժշկել
զբեկեալս սրտիք » և յուսոյ և քաջալե-
րութեան բառեր արտասանել յունկն վըշ-
տագնելոյ. « Մի՛ հեգնեսցես զայր ի դաւ-
նութիւն անձին նորա » (Սիր. է, 12).
« Միմիջարեւեք, միմիջարեւեք զժող-
վուրդ իմ, սա՛ն Աստուած, քահանայք
խօսեցարուք ի սիրտ Երուսաղէմի՝ և միմի-
ջարեւեք զգա, զի ԼԻ ԵՂԵՒ ՏԱՌԱՊԱ-
ՆՕՒՅ » (Ես. ի, 1-2). « . . . թէ օտարաց
վտանգելոց, նաեւ թշնամեաց՝ խնամ առ-
նիլ հրամայէ Քրիստոս, և ողորմել, և պա-
տուհաս սպառնայ՝ որք ո՛չն առնեն, քա-
նի՛ ևս եղբարցն, և անդամոց եկեղեց
ւոյն(***): »

Բայց կը լսեմ որ շատեր կ'առարկեն
ինձ և կ'ըսեն. այս ամենը շատ լաւ, բայց
ինչո՞ւ դու ժողովուրդը չէ միմիջարուած,
ինչ է ուրեմն պատճառն անհամաձայնու-
թեան Եպիսկոպոսաց և Ազգին միջեւ:
Նախ պէտք է ըսենք թէ սկզբունքի ան-
համաձայնութիւն չկայ, քանի որ երկուս-
տեք համոզուած է ամեն ոք թէ բարեք
և հաստատուն կանոնադրի մը պէտքն
անհրաժեշտ է: Խնդիրը ժամանակի վրայ
է միայն. Սիւնհոգեւոր կ'ըսէ՛ նախ Կ-Պատ-
րիարք և ապա կանոնադր. Երեսփ. ժո-

(*) Անդանոր, էջ 37:

(**) S. Ambr. de offic. Minist. lili. III, c. III.

(***) Ս. Ն. Ենքոյանի, Թուղթ Ընդհ.,
էջ 33:

ղովը կը պատասխանէ՝ նախ կանոնադր
և ապա Կ-Պատրիարք: Ո՛չ Եպիսկոպոսք
յուրի դիտաւորութիւն մ'աւելին — քաւ լի-
ցի — և ո՛չ Երեսփոխանք, Ի՞նչ է եր-
կու կողման ալ փափաքն. — օրինա-
ւոր կանոնադրութիւն մը և Ազգին ու Ե-
կեղեցւոյ բարեքն: Արդ, Պատմ. Երեսփ.
Տեարք, եթէ զմեզ ապաւովեն թէ յետ
Կ-Պատրիարքի ընտրութեան ստոյգ և ան-
հրաժեշտ պիտի զբաղին կանոնադրի խն-
դրով, կը յամարի՞ք ձեր որոշման վրայ:
— Ո՛չ! — Ընդունեցէ՛ք ուրեմն այդ ա-
պաւովութիւնն, և խնդիր վերջանայ: Ա-
թոռոյ պարագայութիւնը բնաւ ցանկալի
բան մը չէ, և անթիւ գործքեր կան, ի
Պոլիս և ի գաւառս, որք կը տուժեն ի
չգոյն Կ-Պատրիարքի:

Այս առթիւ ներուրի՛ ինձ ըսել թէ կա-
ռավարելու արուեստն ինքնին դժուարա-
գոյն արուեստ մ'է՛ արդէն, պէտք չէ եր-
բեք նորանոր կնճառութիւններով կրկ-
նապատիկ եւս դժուարացնել զայն. այլ
ընդհակառակն ամեն ոք իւր սահմանին
մէջ պէտք է աշխատի դիւրութիւններ ըն-
ծայել միշտ: Ահա իմ խոսքն համոզումս,
որ եթէ սխալ է՝ պատրաստ եմ մերժելու:
Պատմ. Սիւնհոգեւոր կամ օրուան Կ-Պատ-
րիարքը պէտք է ջանայ դիւրացնել Երեսփ.
ժողովոյ պատասխանատուութիւնն առաջի
Ազգին, և Պատմ. Երեսփոխանութիւնը
պէտք է աշխատի դիւրացնել Սիւնհոգին
կամ օրուան Կ-Պատրիարքին պատասխա-
նատուութիւնն առաջի Աստուծոյ և առա-
ջի Պատմութեան: Ամեն պարագայի մէջ
կեդրոնը պէտք է բարի օրինակ լինի գա-
ւառներուն. հոս եղած համաձայնութիւնը
կամ տարաձայնութիւնը իրենց արձագանգ
ունին գրեթէ միշտ հեռուները: Որչափ
աւելի սէր և միութիւն տիրեն հոս, այն-
չափ աւելի նաեւ այլուր կղեր և աշխար-
հական կը գործեն համերայն մի սիրտ և
մի հոգի: Ընդհանուր խաղաղութեան հա-
մար չքաւեր միաբանիլ և եթէ սկզբունքնե-
րով պէտք է ջանալ նաեւ գտնել միու-
թեան հնարք և միջոցներ ի գործնակա-
նին, և ուր որ անկարելի է հարթել ու
բառնալ դժուարութիւնները, պէտք է
գիտնալ դարձնել զանոնք իրարմ և հե-
ռառեան վարչութեան մը համար՝ ընդհա-
րուները (conflicts) խորշելի հոս յաւէտ ա-
մեն բանէ աւելի: Անոնք որ ո՛րեք տիպոգ-
ոսով միջամուխ կը լինին հանրային գոր-
ծոց՝ լաւ է որ ուսումնասիրեն մեծ վար-
չագէտներու կեանքն ու գործունէութիւնն:
Եթէ ո՛ր գիտութիւն improviser չենք
կրնար ընել, որչափ եւս աւելի ժողո-
վուրդ մը զեկավարելու փափուկ և դժ-
ուարին գիտութիւնը:

Հ. Լազուտէր որ հրաշալի քարոզիչ
մը և մեծահանձար իմաստասէր մը չէ ե-
ղած միայն, այլ նաեւ խորաթափանց հիմ-
նադիր և մեծ վարչագէտ մը, ի մէջ այլոց
սոյն թանկագին խրատները կուտայ ա-
նոնց. . . որք կ'ուզեն օգտուիլ. « Կառա-
վարելու մէջ պէտք է անշուշտ հաստա-
տամտութիւն, բայց նաեւ շատ դիւրա-
բարձութիւն, համբերութիւն, կարեկցու-
թիւն: . . . Խօսակցութեան մէջ զգուշա-
ցէք ձեր գաղափարը կարի բացարձակօրէն
յայտնել. գիտցէք հանդուրժել և հասկը-
նալ այլոց կարծիքները. . . Մի՛ տճապա-
րէք իսկոյն յաջողելու, վասն զի Աստուած

իսկ սիրն ըրած է երբեք առանց ժամա-
նակի. . . Լաւ չպիտի լինէր ձեզ չունե-
նալ առաւել կամ նուազ դժուարահաճ նը-
կարագիրներ: մի՛ վատեք բարեացակա-
մութեան պակասէն կամ տեսակ մը զանա-
խուլ ընդդիմութիւնէ. . . Մարդիկ ան-
հուն քաղցրութեամբ և հաշտութեամբ
և եթէ կը կառավարուին նոյն իսկ խստա-
կրօն կեանքի մէջ. . . Պէտք է գիտնանք
շատ ներքի, երբ զմարդիկ կը կառավա-
րենք. On ne gouverne les hommes, même
austèrement, qu'avec infiniment de dou-
ceur et de conciliation... Il faut savoir
beaucoup pardonner, quand on gouverne
les hommes(*) »:

Քանի որ խնդիրը խոհմութեան, հան-
րային գործոց և վարչային ճարտարու-
թեան վրայ է, յիշենք նաեւ տաղանդա-
ւոր բարոյախօսին, Ժուլյէրի սոյն գեղե-
ցիկ և իմաստալից առածն, որ իւր կար-
ճութեան մէջ ամբողջ յօդուած մը կ'ար-
ժէ. Il ne faut pas couper ce qu'on peut
dénouer. Մի՛ կտրեր ինչ որ կրնաս քա-
կել(**): »

Ո. Կ. Մ.
20/2 Փետր. 1910

ՄԻՄԻՔԱՐ ԱՐՔԱՅ ՍԵՐԱՍՏԱՅԻ

«ԿԱՆԱՆԻՆԻ ՆՈՒՆԻՐ

ԻՆԿԱՍՏ ՀԱՅՈՒՆ»

Բ.

Միմիքար կը ծնանի 1676ին Սեբաստիո
մէջ. իր կենաց առաջին տարիները աղօթ-
քի, ուսման և ձեռագործերու կը պարա-
պի, աշակերտելով քահանայի մը և երկու
մաքը. կոյսերու: Ծառն և հինգ տարե-
կան հասակին Սեբաստիո վանքը կը դիմէ
առաքելութեան և գիտութեան ծառաւը
յաջեցնելու համար. բայց աւաղ:

Վանքերը մեր մէջ երբեմն փարոս լու-
սաշող գիտութեան, վառարան, կեդրոն
քրիստոնէական ամեն ազնիւ հրահանգնե-
րու, անոնք ալ ինկած էին բարեբերուն
հետ: Այս վանքերուն քարերը լոկ մնա-
ցած էին ժամանակի ընթացքին մէջ վկայ.
տգիտութիւնը բոյն դրած էր հոն և մո-
լութեանց հանցատուայրի դարձած էին
չատերը:

Այս պայմաններու տակ Ս. Նշանի վան-
քը չկրցաւ զօհանգում տալ օրէ օր անոյ
փափաքին Միմիքարի:

Աւելի բարեբաղդ ըլլալու յուսով հե-
տեւեցաւ Միքայէլ Եպս. ի մը որ էջմիա-
ծին կը վերադառնար Սեբաստիայէն: Ա-
ւաղ, այս փորձերուն մէջ ալ յուսախաբ
եղաւ, քանի որ խեղճութեան հանդիպե-
ցաւ հոն ալ: Անցեր էր, անցեր. . .

« Հին և երկայն դարք այլեւայլ բաղդով,
« Մեր Հայ հայրենեաց վրայէն սանելով,
« Սեւ ու սպիտակ քօղերով պատեր,
« Զաղուորն այն ծածկեր,
« Անցեր էր անցեր. . . »

Ուղեւորութեան մէջ Կարին (Էրզրում)
հանդիպած էր Յիսուսեան վարդապետի
մը. գտած ու գծած էր իտէալը զոր կը
հետապնէր միշտ. — Ազգը վերականգնել:

(*) Lettres inédites du P. Lacordaire,
pp. 9, 10-11, 22.

(**) Les Pensées de Joubert:

* * * Բուսիս հիւժիւմէն թիւին, Կիրիտ աւէլանի միւսայտ սուրէթտէ վէ սէրը, թէսվիէ իթմէք իւզրէ պիր սուրէթ և զըրլամադտա օլաըղը՝ Բէթրէսպուրկտ պիւտրիլիտօր, Յրանսա տախի, Բուս Կիպի Կիրիտ մէսէլանին սուրէթն թէսք

* * * Բուսիս հիւրերւմթխին, Կրիտ մէջ
էլէսինի միւսայտ սուրէթաւ վէ սերիան
էնսվիչ իմմէթ իւլրէ պլր սուրէթ հա-
ըրումագտա օլաղը՝ Բէթթէպուրկտան
իւարթիթիտօր: Յրմասա տարի, Բուսիս
հալ իւրտ մէլէսաննիւ սուրէթ թէսիւ-

Սալը կիւնիւ, Մէնչիս, Անմէտ Ռիգա
պէյրն թարթը ըրեաւսէթինսէ ինթիմա իթե

ኒ.፡	ቃ.፡	ኒ.፡	ቃ.፡	ኒ.፡	ቃ.፡	ኒ.፡	ቃ.፡	ኒ.፡	ቃ.፡
20677	300000	188941	1250	1844043	1250	555562	1000	1329091	1000
242164	25000	390039	፡	1863283	፡	638208	፡	1346149	፡
555114	10000	783243	፡	209522	1000	806593	፡	1486999	፡
755078	፡	859236	፡	260502	፡	889442	፡	1581375	፡
237545	2000	1008838	፡	261137	፡	1008840	፡	1637173	፡
186876	፡	1054425	፡	271362	፡	1008966	፡	1676731	፡
441548	፡	1119294	፡	271365	፡	1124056	፡	1859137	፡
456655	፡	1467296	፡	294028	፡	1137492	፡	1879740	፡
809239	፡	1566128	፡	365328	፡	1167473	፡	1885755	፡
941701	፡	1681666	፡	455009	፡	1236798	፡	1901971	፡